ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել:
Մանրամասների և ամբողջական պայմանների համար դիմել
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ameriabank.am | 010 56 11 11
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2,
Էլ. հասցե՝ office@ameriabank.am
Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից

Հաշվի բացման և փակման ընթացակարգերը

1. Բանկը Հաճախորդի համար բացում է սահմանափակ հասանելիությամբ կամ լիարժեք ընթացիկ հաշիվ՝ Հաճախորդի կողմից ստացված հաշվի բացման հայտի (հայտ-պայմանագրի) հիման վրա 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում:
   1.1. Բանկը Հաճախորդի համար բացում է սահմանափակ հասանելիությամբ ընթացիկ հաշիվ քանի դեռ Հաճախորդը չի անցել ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ամբողջական նույնականացում: Ընդ որում, Հաճախորդի համար սահմանափակ հասանելիությամբ ընթացիկ հաշիվ բացվելու դեպքում Հաճախորդին թույլատրվում է տվյալ հաշվով կատարել հետևյալ սահմանափակ գործառնությունների տեսակները և օգտվել հետևյալ սահմանափակ ծառայություններից՝
      1.1.1. Փոխանցումներ Հաճախորդի հաշիվների միջև,
      1.1.2. Ներբանկային փոխանցումներ՝ մեկ փոխանցման համար 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ առավելագույն գումարով,
      1.1.3. Արտարժույթի փոխանակում,
      1.1.4. Կոմունալ վճարումներ,
      1.1.5. Պետբյուջե փոխանցումներ,
      1.1.6. ՃՈ տուգանքների վճարում,
      1.1.7. Ինտերնետ/մոբայլ-բանկինգ համակարգում հասանելի հայտեր:
   1.2. Հաճախորդի կողմից ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ամբողջական նույնականացում անցնելուց հետո Բանկը Հաճախորդի համար բացում է լիարժեք հաշիվ, իսկ նախքան ամբողջական նույնականացում անցնելը Հաճախորդի համար սահմանափակ հասանելիությամբ հաշիվ բացված լինելու դեպքում փոխում է սահմանափակ հասանելիությամբ հաշվի տեսակը՝ այն դարձնելով լիարժեք բանկային հաշիվ: Ընդ որում, Հաճախորդի համար լիարժեք բանկային հաշիվ բացվելու/սահմանափակ հասանելիությամբ բանկային հաշիվը լիարժեք բանկային հաշվի վերածվելու պահից Բանկը վերացնում է սահմանափակ հասանելիությամբ բանկային հաշվի նկատմամբ կիրառվող սահմանափակումները:
2. Ընթացիկ հաշիվը բացվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով, շվեյցարական ֆրանկով, անգլիական ֆունտ ստերլինգով, կանադական դոլարով, ճապոնական իենով, ավստրալական դոլարով, ԱՄԷ դիրհամով, անկանխիկ ոսկով (999.9 հարգի), ինչպես նաև Բանկի կողմից գնանշվող այլ արժույթով: Ընթացիկ հաշիվներով գործառնությունները կատարվում են ընթացիկ հաշվի արժույթով՝ բացառությամբ դրամական միջոցների փոխանակման գործառնությունների: Արտարժույթի փոխանակումը կատարվում է տվյալ պահի դրությամբ Բանկում գործող փոխարժեքով:
3. Անկանխիկ ոսկով (999.9 հարգի) հաշիվը օգտագործվում է բացառապես անկանխիկ եղանակով: Հաշիվը նախատեսված չէ կանխիկացում կամ այլ հաշիվներին (բացառությամբ անկանխիկ ոսկու հաշիվներին) փոխանցում կատարելու համար:
4. Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերին և տեղեկություններին կարող եք ծանոթանալ **այստեղ**:
5. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):
6. Բանկի կողմից կնքված պայմանագրերը, համաձայնագրերը, համագործակցությունները, կամ անդամակցությունները ուղղակի ազդեցություն կարող են ունենալ հաճախորդների հաշիվների բացման և սպասարկման վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ

կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»):

7. Հաճախորդի հաշիվը փակվում է Հաճախորդի նախաձեռնությամբ հաշվի փակման հայտը գրավոր թղթային կամ վերջինիս կողմից Բանկի հետ որպես հաղորդակցման եղանակ նախընտրած հեռահար կապի միջոցով ներկայացված հանձնարարականի հիման վրա: Հաշիվը փակվում է,
   7.1. եթե առկա չէ հաշվի վրա դրական մնացորդ, Բանկի նկատմամբ պարտավորություն և/կամ հաշվի վրա արգելանք, իսկ դրական մնացորդի առկայության դեպքում գումարը կանխիկացվում է կամ փոխանցվում է Բանկի այլ հաշվեհամարին կամ այլ բանկի հաշվեհամարին, որից հետո զրոյական մնացորդով հաշիվը փակվում է հաշվի փակման դիմումը ներկայացնելուց հետո 1 /մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում,
   7.2. Բանկի նախաձեռնությամբ՝ հաշիվների և հաճախորդների բազայի մոնիթորինգի արդյունքների հիման վրա,
   7.3. Բանկի նախաձեռնությամբ՝ նախորդ 12 ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և զրոյական մնացորդի առկայության դեպքերում
8. Ընթացիկ հաշիվների մնացորդների նկատմամբ Բանկը տոկոսներ չի վճարում:
9. Հաշվի քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և հաղորդակցման եղանակով: «ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»:
10. Հաճախորդի, այդ թվում՝ հեռահար կապի միջոցներով ստացված հայտերով՝ արտարժույթի գործառնությունները, անկախ հայտի ստացման պահից, իրականացվում են Բանկի կողմից գործարքի փաստացի կատարման պահի դրությամբ Բանկի կողմից տվյալ պահին սահմանված փոխարժեքներով և կարգով: Աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ստացված արտարժույթի փոխանակման, անկանխիկ ոսկու առքուվաճառքի հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:
11. Ընթացիկ հաշվին կանխիկ միջոցները մուտքագրվում են գումարի ներկայացման պահին, իսկ անկանխիկ միջոցները՝ թղթակից բանկից հավաստիացնող փաստաթղթերի առկայության դեպքում:

Սակագին	Ստանդարտ
1. Հաշվի բացում ծառայությունների փաթեթով (փաթեթը[1] ներառում է ՀՀ դրամով և մեկ արտարժույթով հաշիվ, Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգ՝ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կոդի օգտագործմամբ, մեկ վճարային քարտ[2]) Փաթեթը գործում է միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող հաճախորդների համար:	5,000 ՀՀ դրամ
2. Հեռավար եղանակով «Սմարթ» հաշվի բացում ծառայությունների փաթեթով (փաթեթը[1] ներառում է ՀՀ դրամով հաշիվ, Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգ՝ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կոդի օգտագործմամբ, մեկ վճարային քարտ[3]) Փաթեթը գործում է միայն ՀՀ ռեզիդենտ ՀՀ քաղաքացի հանդիսացող հաճախորդների համար:	Անվճար
3. Հաշվի բացում (այդ թվում հեռավար) «Ուսանողների համար» ծառայությունների փաթեթով (փաթեթը[1] ներառում է ՀՀ դրամով բանկային հաշիվ, Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգ՝ Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կոդի օգտագործմամբ, «Ուսանողական» տեսակի մեկ քարտ [4]):	Անվճար

[1] Փաթեթի մեկ կամ մի քանի ծառայությունից հրաժարվելու դեպքում փաթեթի արժեքը չի փոխվում, իսկ հրաժարված ծառայությունների հետագայում մատուցման համար գործում են տվյալ ծառայությունների համար սահմանված միջնորդավճարները: Փաթեթից կարող են օգտվել այն հաճախորդները, ովքեր չունեն փաթեթում ներառված որևէ ծառայություն (չի տարածվում «Սմարթ» և «Ուսանողների համար» փաթեթների վրա):

[2] Առաջարկվում է VISA Classic կամ MasterCard Standard վճարային քարտ: Տրամադրվում է առանց տարեկան սպասարկման վճարի:

[3] Առաջարկվող քարտատեսակներից VISA Classic, MasterCard Standard կամ ArCa Carrefour Smile վճարային քարտ ընտրելու դեպքում այն տրամադրվում է առանց տարեկան սպասարկման վճարի, իսկ Visa Classic Moons քարտի համար գործում է տարեկան սպասարկման վճար՝ համաձայն Ամերիաբանկ ՓԲԸ Քարտերի սակագների:

[4] «Ուսանողական» քարտը տրամադրվում է առանց տարեկան սպասարկման վճարի:

4. Հաշվի բացում[5]	
4.1. ՀՀ դրամով հաշիվներ	
4.1.1. ՀՀ քաղաքացի հանդիսացող հաճախորդների համար	Անվճար
4.1.2. ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդների համար[6]	25,000 ՀՀ դրամ
4.2. Արտարժույթով, այդ թվում՝ առարկայազուրկ ոսկով (999.9) մետաղական հաշիվներ	
4.2.1. Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	2,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հաշվի համար
4.2.2. Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հաշվի համար
4.2.3. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով բացելու դեպքում	Անվճար
5. Հաշվի նվազագույն մնացորդ[7]	չի կիրառվում
6. Հաշվի վարում[8]	
6.1. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներով նվազագույնը 150,000 ՀՀ դրամին համարժեք շրջանառության առկայության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում	Անվճար
6.2. Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի բանկային հաշիվներով 150,000 ՀՀ դրամից փոքր շրջանառության կամ հաշիվների միջին օրական մնացորդը 50,000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում	1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի համար
7. Հաշվի փակում	**Անվճար**

Հաշվով հնարավոր գործառնություններ[9] և դրանց սակագները և պայմանները

Սակագին	Ստանդարտ
1. Կանխիկ միջոցների մուտքագրում հաճախորդի հաշվին	
1.1.ՀՀ դրամ	

[5] Բանկային ծառայություններից օգտվելիս անհրաժեշտ է բացել ՀՀ դրամով բանկային հաշիվ: Ժամկետային ավանդ ներդնելիս, պարտատոմս ձեռքբերելիս, պահատուփ բացելիս, բրոքերային հաշիվ բացելիս տվյալ ծառայության համար անհրաժեշտ հաշվի բացման միջնորդավճար չի գանձում:

[6] Միջնորդավճարը գանձվում է միայն առաջին դրամային հաշվի բացման համար:

[7] Հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը սահմանվում է 0%:

[8] Հաճախորդի որևէ բանկային հաշվի շրջանառությունը (այդ թվում քարտային) տարածվում է հաճախորդի մնացած բոլոր հաշիվների վրա (այս դրույթը գործում է միայն միջնորդավճարի գանձման տեսանկյունից): Ընդ որում, եթե հաճախորդը ունի միայն գործող քարտ, որին կցված է քարտային հաշիվ, ապա միջնորդավճարը չի գանձվում, իսկ փակված քարտի դեպքում, քարտային հաշվից միջնորդավճարը գանձվում է սակագնին համապատասխան:
Միջնորդավճարը գանձվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:
Նախորդ 12 ամիսների ընթացքում բոլոր հաշիվներով շրջանառության բացակայության դեպքում հաճախորդի հաշվով դեբետագրումը սահմանափակվում է յուրաքանչյուր օրացուցային եռամսյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում:
Նախորդ 12 ամիսների ընթացքում հաշվով շրջանառության բացակայության և մնացորդի զրոյական լինելու դեպքում հաճախորդի հաշիվը փակվում է յուրաքանչյուր օրացուցային կիսամյակին հաջորդող երկու շաբաթվա ընթացքում, բացառությամբ այն հաշիվների, որոնք անհրաժեշտ են Բանկի կողմից հաճախորդին մատուցվող այլ ծառայության սպասարկման համար:
Հաշվի վարման միջնորդավճար չի գանձվում, եթե հաճախորդն ունի միայն բրոքերային և/կամ բանկային հաշիվ, որը բացվել և սպասարկվում է պահատուփի ծառայության տրամադրման համար:

[9] Ներկայացված են լիարժեք ընթացիկ հաշվով հնարավոր գործառնությունների տեսակները:

1.1.1. Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվին	0.3%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ
1.1.2. Այլ հաճախորդների հաշվին	
1.1.2.1. Մինչև 50,000 ՀՀ դրամը ներառյալ[10]	500 ՀՀ դրամ
1.1.2.2. 50,000 ՀՀ դրամից ավելի	Անվճար
1.2.ԱՄՆ դոլար, եվրո[11]	Անվճար
1.3.ՌԴ ռուբլի, բրիտանական ֆունտ, շվեյցարական ֆրանկ և այլ արտարժույթ [12] [13]	Համաձայն տվյալ օրվա համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափի
2. Կանխիկի տրամադրում[14]	

[10] Բացառությամբ հետևյալ դեպքերի, որոնց պարագայում հաշվին կանխիկ միջոցների մուտքագրման դեպքում միջնորդավճար չի գանձվում.

- Միջնորդավճարի գանձման նպատակով կանխիկի մուտքագրում
- Մասնագետ-գանձապահի միջոցով կատարվող այլ գործարքների (ներառյալ ՀՀ Պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ նոտարական գրասենյակներին, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակներին և պետական այլ մարմինների հաշիվներին կատարվող փոխանցումների) հետ միաժամանակ իրականացվող կանխիկի մուտքագրում:

[11] 500 եվրո արժողությամբ թղթադրամների հաշվին մուտքագրման համար կիրառվում է 1% միջնորդավճար: 500 եվրո արժողությամբ թղթադրամներ ընդունվում են միայն Կամար մասնաճյուղում և Գլխամասային գրասենյակում:

[12] Ժամկետային ավանդ ներդնելիս կանխիկի մուտքագրումը կատարվում է անվճար: Ավանդի ներդրումից հետո 30 օրվա ընթացքում ժամկետից շուտ ընդհատվող ավանդների դեպքում ավանդը մարելիս գանձվում է միջնորդավճար՝ ավանդի փաստացի մարման օրվա դրությամբ Բանկում գործող կանխիկի մուտքի դրույքաչափի չափով:

[13] Միջնորդավճարը ենթակա է գանձման որևէ գործարքի կատարման կամ դրա արդյունքում կանխիկի մուտքագրման դեպքում:

[14] Կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է ստորև ներկայացված աղյուսակի հիման վրա.

Գրասենյակ	**Կանխիկի տրամադրում առանց նախապես ներկայացված հայտի**	**Կանխիկի տրամադրում նախապես ներկայացված հայտի հիման վրա**		
	Պահանջվող կանխիկ գումար (տրամադրվում է հայտը ներկայացնելու գործառնական օրվա ընթացքում)	**Պահանջվող կանխիկ գումար**	**Կանխիկ գումարի տրամադրման ժամկետ մինչև 13:00 հայտ ներկայացնելու դեպքում**	**Կանխիկ գումարի տրամադրման ժամկետ 13:00-ից հետո հայտ ներկայացնելու դեպքում**
Կամար մասնաճյուղ/ Գլխամասային գրասենյակ	Մինչև 30 մլն ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար, 50,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	30 մլն ՀՀ դրամից, 50,000 ԱՄՆ դոլարից, 30,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 3 գործառնական օրվա ընթացքում	Մինչև 4 գործառնական օրվա ընթացքում
Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղեր (բացառությամբ Կամար մ/ճ-ի)	Մինչև 20 մլն ՀՀ դրամ, 25,000 ԱՄՆ դոլար, 15,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	20 մլն ՀՀ դրամից, 25,000 ԱՄՆ դոլարից, 15,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 3 գործառնական օրվա ընթացքում	Մինչև 4 գործառնական օրվա ընթացքում
Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղեր	Մինչև 10 մլն ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար, 10,000 եվրո և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթ (մյուս արտարժույթների դեպքում)	10 մլն ՀՀ դրամից, 10,000 ԱՄՆ դոլարից, 10,000 եվրոյից և 1 մլն ՀՀ դրամին համարժեք արտարժույթից ավել (մյուս արտարժույթների դեպքում)	Մինչև 5 գործառնական օրվա ընթացքում	

Ուժի մեջ է՝ 13.05.2022թ-ից

2.1.Հաճախորդի հաշվին կանխիկ մուտքագրված միջոցներից	Անվճար
2.2.Հաճախորդի հաշվին անկանխիկ մուտքագրված միջոցներից[15]	
2.2.1. ՀՀ դրամ	
2.2.1.1. Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	0.2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
2.2.1.2. Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	0.1%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ
2.2.2. ՌԴ ռուբլի	0.3%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
2.2.3. Այլ արտարժույթ	1%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
3. Հաշվի հեռավար սպասարկում[16]	
3.1. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով՝	
3.1.1 Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգի ակտիվացում	
3.1.1.1 Մեկանգամյա ծածկագիր գեներացնող սարքի տրամադրում/փոխարինում նույն տեսակի սարքով	Միանվագ 5,000 ՀՀ դրամ՝
3.1.1.2 Ամերիա Թոքեն ծրագրային ապահովման կոդի տրամադրում/ փոխարինում նույն տեսակի սարքով	Միանվագ 1,000 ՀՀ դրամ
3.2. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգի գաղտնաբառի վերականգնում Բանկի մասնաճյուղերում	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
3.3. Հեռախոս – բանկ ծառայության տրամադրում	Միանվագ 5,000 ՀՀ դրամ
4. Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրում	
4.1. Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում	Անվճար
4.2. 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում[17]	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար
4.3. 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի ուղարկում հաճախորդի էլեկտրոնային հասցեին առանց դրոշմակնիքի[16]	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի և էլեկտրոնային ձևով պահվող յուրաքանչյուր փաստաթղթի համար
4.4. Տեղեկանքների տրամադրում	
4.4.1. 3 ամիս և ավել հաշվետեր հաճախորդներին	3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

Այն դեպքում, երբ հաշվից կանխիկացումից հետո հաճախորդը փակում է Բանկում առկա բոլոր հաշիվները և հաճախորդի հաշիվների մնացորդը փոքր է սակագներով սահմանված կանխիկացման նվազագույն գումարից, կանխիկացումից միջնորդավճար չի գանձվում:

[15] Կանխիկի տրամադրման միջնորդավճար չի գանձվում հետևյալ միջոցների կանխիկացման դեպքերում.

- 91 օր և ավել ժամկետով ներդրված, ինչպես նաև 31 օրով ներդրված և 3 անգամ անընդմեջ երկարաձգված ավանդների գումարների դեպքում (բացառությամբ ավանդատուի նախաձեռնությամբ պայմանագրի ժամկետից շուտ դադարեցվող ավանդների);
- ընդհատման հնարավորություն ունեցող ավանդների պայմանագրի ժամկետից շուտ դադարեցվող գումարների դեպքում, եթե դադարեցումը կատարվում է ավանդի ներդրումից առնվազն 91 օր հետո;
- նվազեցման հնարավորություն ունեցող ավանդների պայմաններով նախատեսված չափով նվազեցվող գումարների դեպքում;
- պարտատոմսերի գումարների դեպքում՝ մինչև պարտատոմսի մարման ժամկետը պարտատոմսը պահպանելու դեպքում:
- ավանդների, խնայողական հաշիվների միջոցների նկատմամբ հաշվեգրված տոկոսագումարների և պարտատոմսերի արժեկտրոնների վճարման դեպքում;

Բանկի կողմից վարկի տրամադրումից առաջացած գումարներից կիրառվում է նշված սակագինը, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ սակագին չի սահմանվում:

[16] Բանկը յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար սահմանում է արտարժույթի առք և վաճառքի փոխարժեքներ, որոնք գործում են Բանկի աշխատանքային ժամերին: Հեռակառավարման համակարգերով հաճախորդների սպասարկման ընթացքում աշխատանքային ժամերից դուրս (մինչև ժամը 09:30 և ժամը 17:00-ից հետո), նաև ոչ աշխատանքային օրերին (այդ թվում նաև շաբաթ օրերին) ստացված արտարժույթի փոխանակման հայտերը Բանկի կողմից կարող են մերժվել:

[17] Սակագինը չի կիրառվում Բնակելի նշանակության անշարժ գույքի ձեռքբերման/վերանորոգման/կառուցապատման վարկերի քաղվածքների տրամադրման դեպքում:

4.4.2. Մինչև 3 ամսվա հաճախորդներին	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
4.4.3. Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգով, Բանկի կայքով պատվիրելու դեպքում[18]	1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
4.5. Քաղվածքի առաքում	
4.5.1. Էլեկտրոնային եղանակով	Անվճար
4.5.2. Փոստով՝ ՀՀ տարածքում[19]	Ամսական 1,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
4.5.3. Փոստով՝ ՀՀ տարածքից դուրս[20]	Համաձայն փոստային ծառայության կողմից ներկայացված ծախսերի
4.6. Քաղվածքների և/կամ այլ պարտադիր ներկայացման ենթակա ծանուցումների ստացման եղանակի փոփոխություն	
4.6.1. Տարեկան մեկ անգամ	Անվճար
4.6.2. Տարեկան երկու և ավել անգամ	
4.6.2.1. Հանձնարարականը Բանկի տարածքում կամ ԻԲ համակարգով ներկայացնելու դեպքում	Անվճար
4.6.2.2. Հանձնարարականը Բանկի համար ընդունելի այլ եղանակով ներկայացնելու դեպքում	5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ
5. Փոխանցումներ[21]	
5.1. ՀՀ դրամով	
5.1.1. Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվին	0.3%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ
5.1.2. Այլ փոխանցումներ	
5.1.2.1. Ներբանկային	Անվճար
5.1.2.2. ՀՀ բանկեր[22]	

[18] Տեղեկանքի հայտը պետք է ներկայացված լինի առնվազն մեկ բանկային օր առաջ:

[19] Միջնորդավճարը գանձվում է քաղվածքը ստանալու ամսվա դիմաց մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ:

[20] Առաքումը կատարվում է ռեգուլյար փոստի միջոցով:

[21] Բանկը թղթային եղանակով և հեռակառավարման համակարգերով վճարման հանձնարարականները ընդունում և փոխանցում է համաձայն ստորև սահմանված ժամանակացույցի՝ հաճախորդի հաշվին փոխանցման ենթակա գումարի փաստացի առկայության պարագայում.

	Թղթային եղանակով ներկայացվող վճարման հանձնարարականներ				**Ինտերնետ-Բանկինգ/ Մոբայլ բանկինգ համակարգերով, Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականներ (բացառությամբ ներբանկային փոխանցումների, որոնք փոխանցվում են ոչ ուշ, քան հաջորդ բանկային օրը)**			
	Ընդունում	**Փոխանցում**	**Ընդունում**	**Փոխանցում**	**Ընդունում**	**Փոխանցում**	**Ընդունում**	**Փոխանցում**
ՀՀ դրամ	Մինչև ժամը 13:00	Նույն բանկային օրը	Ժամը 13:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
Այլ արտարժույթ, այդ թվում՝ առարկայա-զուրկ ոսկի	Մինչև ժամը 15:00	Նույն բանկային օրը	Ժամը 15:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

Հեռախոս-բանկ ծառայության միջոցով իրականացվող ներբանկային փոխանցումները կատարվում են նույն օրվա ընթացքում:

[22] Ժամը 13:00-ից մինչ 15:00-ը թղթային եղանակով ներկայացված 50 մլն դրամը չգերազանցող վճարման հանձնարարականների (14:00-ից մինչև 15:15-ը էլեկտրոնային վճարման հանձնարարականների դեպքում) հիման վրա նույն բանկային օրը փոխանցում կատարելու համար գանձվում է 10,000 ՀՀ դրամ միջնորդավճար՝ յուրաքանչյուր վճարման հանձնարարականի համար: Սույն սակագինը կիրառվում է նաև 50 մլն ՀՀ դրամը գերազանցող յուրաքանչյուր վճարման հանձնարարականի դեպքում, եթե Բանկը հնարավորություն ունի բացառության կարգով վերոնշյալ պայման/ներ/ով նույն բանկային օրը կատարել վճարման հանձնարարականը:

Ուժի մեջ է՝ 13.05.2022թ-ից

5.1.2.2.1. Հաշվետեր հանդիսացող հաճախորդների համար	
5.1.2.2.1.1. Վճարման հանձնարարականը Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ-Բանկինգ համակարգերով ներկայացնելու դեպքում	Անվճար
5.1.2.2.1.2. Վճարման հանձնարարականը Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում կամ Հեռախոս- բանկ ծառայության միջոցով ներկայացնելու դեպքում	200 ՀՀ դրամ
5.1.2.2.1.3. Վճարման հանձնարարականը Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում ներկայացնելու դեպքում	100 ՀՀ դրամ
5.1.2.2.2. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդների համար՝ Երևան քաղաքում գտնվող Բանկի մասնաճյուղերում	0.1%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
5.1.2.2.3. Հաշվետեր չհանդիսացող հաճախորդների համար՝ Երևան քաղաքից դուրս գտնվող Բանկի մասնաճյուղերում	0.1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
5.2. Արտարժույթով[23]	
5.2.1. Ներբանկային	Անվճար
5.2.2. ՀՀ այլ բանկեր	
5.2.2.1 ԱՄՆ դոլարով, եվրոյով[24]	0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ
5.2.3. Արտերկիր	
5.2.4. ՌԴ ռուբլով	
5.2.3.1 Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	3,000 ՀՀ դրամ
5.2.2.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	0.1 %, նվազագույնը՝ 3,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 30,000 ՀՀ դրամ
5.2.3. ԱՄՆ դոլարով, եվրոյով[25]	
5.2.3.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ
5.2.3.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	
5.2.3.2.1. Վճարման հանձնարարականը թղթային կամ Հեռախոս- բանկ ծառայության միջոցով ներկայացնելու դեպքում	0.15%, նվազագույնը՝ 7,500 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
5.2.3.2.2. Վճարման հանձնարարականը Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգով ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 6,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
5.2.3.2.3. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է բանկը	5.2.3.2. կետով սահմանված միջնորդավճար + 10,000 ՀՀ դրամ
5.2.4. Բանկի կողմից գնանշվող այլ արտարժույթներով	
5.2.4.1. Թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից	0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 12,000 ՀՀ դրամ

ՀՀ ԿԲ-ում բացված հաշիվներին կատարվող փոխանցումների դեպքում սույն սակագինը չի կիրառվում:

[23] Այն դեպքում, երբ փոխանցվող գումարը կազմում է 3 մլն և ավել ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արտարժույթ, փոխանցումները կատարվում են միայն 5.2.2., 5.2.3.2., 5.2.4.2 տարբերակներով՝ 1,000,000 ՀՀ դրամ միջնորդավճարով:
Սիրիական, կուբայական բանկեր և դրանց մասնաճյուղեր հասցեագրվող փոխանցումները կատարվում են ծախսերի 5.2.3.1. և 5.2.4.1. կետերում նշված տարբերակներով:

[24] ՀՀ ԿԲ-ում բացված հաշիվներին կատարվող փոխանցումների դեպքում փոխանցման միջնորդավճար չի գանձվում:

[25] ՀՀ ԿԲ-ում բացված հաշիվներին կատարվող փոխանցումների դեպքում փոխանցման միջնորդավճար չի գանձվում:

5.2.4.2. Թղթակից բանկի ծախսերը կրում է բանկը, իսկ առկայության դեպքում բոլոր միջնորդ բանկերի ծախսերը հետագայում փոխհատուցվում են հաճախորդին կողմից[26]	
5.2.4.2.1. Վճարման հանձնարարականը թղթային կամ Հեռախոս- բանկ ծառայության միջոցով ներկայացնելու դեպքում	0.15%, նվազագույնը՝ 12,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
5.2.4.2.2. Վճարման հանձնարարականը Ինտերնետ-Բանկինգ/Մոբայլ բանկինգ համակարգով ներկայացնելու դեպքում	0.1%, նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 50,000 ՀՀ դրամ
5.2.5. Բանկում չգնանշվող արժույթներով գումարի փոխանցում[27]	0.2%, նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100,000 ՀՀ դրամ
5.3. Փոխանցումներ առարկայազուրկ ոսկով (999.9)	
5.3.1. Ներբանկային	**Անվճար**
5.3.2. ՀՀ այլ բանկեր և արտերկիր	20,000 ՀՀ դրամ (յուրաքանչյուր մուտքի և ելքի համար)

Հայտարարություններ

1. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
2. Առանց հաճախորդի կարգադրության՝ հաշվում եղած դրամական միջոցները թույլատրվում է բռնագանձել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված գրության/հայտի հիման վրա, ինչպես նաև հաճախորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված կարգով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
3. Բանկի հեռավար եղանակով սպասարկման պայմանները ներկայացված են Ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների 3-րդ ենթաբաժնում:
4. Ընթացիկ բանկային հաշվի հատուցման երաշխավորող է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:
5. Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ:
6. Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են[28].
   - միայն ՀՀ դրամով ավանդի առկայության դեպքում երաշխավորված գումարի չափը կազմում է 16 մլն ՀՀ դրամ,
   - միայն արտարժութային ավանդի առկայության դեպքում երաշխավորված գումարի չափը կազմում է 7 մլն ՀՀ դրամ,
   - եթե հաշվետերը ունի դրամային և արտարժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն ՀՀ դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդի գումարը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
   - եթե հաճախորդը ունի դրամային և արժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը պակաս է 7 մլն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային ավանդը ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն դրամի և հատուցված/հատուցվելիք դրամային ավանդի տարբերության չափով:

   Ընդ որում Բանկում առկա բոլոր
   - դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ,
   - արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ
7. Բանկի սպասարկման ցանցին, մասնաճյուղերի հասցեներին և աշխատանքային ժամերին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ Սպասարկման ցանց:
8. Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
   Տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

[26] Ամերիաբանկի միջնորդ բանկերի կողմից ներկայացված ծախսերը ենթակա են փոխհատուցման հաճախորդի հաշվից:
[27] Փոխանցումը կատարվում է ԱՄՆ դոլարով, իսկ ստացողի հաշվին մուտքագրվում է հաճախորդի նախընտրած արտարժույթով:
[28] Առարկայազուրկ մետաղական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Հայտարարություն՝ ֆիզիկական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքվող գործարքից բխող պահանջները **Ֆինանսական համակարգի հաշտարարին**: Բանկը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ կնքել է համաձայնագիր, որը տարածվում է միայն այն պահանջների վրա, որոնց գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

9. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՅՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»: Կայքի հղումն է www.fininfo.am:
10. Ֆիզիկական անձանց ընթացիկ բանկային հաշվի բացման և սպասարկման ամբողջական պայմաններին և սակագներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ ***«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՄԱԿԱԳՆԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ*** և ***«Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ:***

Ուժի մեջ է՝ 13.05.2022թ-ից